# ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՆԱԽԱԳԾԱՆԱԽԱՀԱՇՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՊԱՐԶ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ԼՄԱՀ-ԳՀԾՁԲ-26/7

ք. Ալավերդի «10» 02 2026թ.

«Ալավերդի համայնքապետարանը», ի դեմս համայնքի ղեկավար Դավիթ Ղումաշյանի -ի, որը գործում է համայնքապետարանի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԱՐԽԻՏԵԿՏ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Նելլի Սիրեկանյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է պարզ փորձաքննության ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:[1]

**2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.[2]

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս կողմից մատուցված պատշաճ ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ վճարան ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու պատշաճ մատուցված ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության պատշաճ մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

---

2.4.3 [illegible] կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4 Շինարարական աշխատանքների կատարման ընթացքում նախագծային շեղումներ առաջանալու դեպքում Կատարողը Պատվիրատուին վճարում է տուգանք՝ յուրաքանչյուր արձանագրված շեղման հետևանքով առաջացած կորստի չափով: Ընդ որում՝

ա. շեղում է համարվում շինարարական աշխատանքների կատարման ընթացքում սկզբնական նախագծի տասը տոկոսը գերազանցող լրացուցիչ ծավալի աշխատանքների ի հայտ գալը, իսկ տուգանքի չափը հավասար է լրացուցիչ ծավալի աշխատանքների արժեքի քսանհինգ տոկոսին,

բ. կորուստ են համարվում նախագծային այնպիսի շեղումները, որոնք հանգեցնում են փաստացի կատարված աշխատանքների փոփոխմանը (քանդման, վերակառուցման և այլն) և լրացուցիչ աշխատանքների կատարմանը, իսկ տուգանքի չափը հավասար է կորստի հանգեցրած՝ փաստացի կատարված աշխատանքների արժեքի հիսուն տոկոսին:[3]

## 3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:[4]

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված ___3___ աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 1665000 (___մեկ միլիոն վեց հարյուր վաթսունհինգ հազար___) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է պայմանագրի 3-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում՝ ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

---

Ընդ որում կողմերի կողմից պատասխան հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:[5]

4.3 Ավտոմեքենաների, սարքերի և սարքավորումների վերանորոգման ծառայությունների դեպքում, մատուցված ծառայությունների դիմաց վճարումներին իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԾxՔ, որտեղ՝

ՎԳ-ն պայմանագրով սահմանված առանձին տեսակի ծառայությունների մատուցման դիմաց վճարվող գումարն է.

ՄԳ-ն ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինն է.

ՆԳ-ն ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարն է.

Ծ-ն մատուցված ծառայության առավելագույն միավորի գինն է.

Ք-ն մատուցված ծառայության քանակն է:[6]

## 2. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[7] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն սահմանված ժամկետում չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:[8]

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորություններն ամբողջությամբ և պատշաճ՝ պայմանագրով սահմանված պահանջներին համապատասխան կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով

---

[5] *Գանձապետարանում հաշիվներ չունեցող պատվիրատուների դեպքում սույն կետի վերջին պարբերությունը խմբագրվում է հետևյալ բովանդակությամբ. «Ընդ որում գնման դիմաց վճարումն իրականացվում է սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:»*

[6] *Պարբերությունը հանվում է, եթե ծառայությունը չի վերաբերում ավտոմեքենաների, սարքերի և սարքավորումների վերանորոգմանը:*

[7] *Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է ստանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:*

*Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:*

[8]

պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:[9]

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի գրավոր առաջարկի առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի համար ծառայության մատուցման պահանջը չի վերացել, իսկ Կատարողի գրավոր առաջարկը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավելի քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման շրջանակներից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի

---

9

լուծելու մասին ծանուցումներ» բաժնում [illegible] պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.12 Կատարողն իրավունք ունի պայմանագրի կնքումից հետո Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 48-րդ գլխով սահմանված դեպքերում և կարգով կատարել գնման պայմանագրից ծագող դրամական պահանջի զիջում՝ պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագրի (այսուհետ՝ ֆակտորինգի պայմանագիր) հիման վրա: Ֆակտորինգի պայմանագիրը պետք է սահմանի, որ ֆինանսական գործակալը համաձայն է, որ պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում Պատվիրատուն վճարումներն իրականացնելիս ապահովի Կատարողի նկատմամբ տույժերի ու տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը վճարվելիք գումարների հետ՝ անկախ պահանջը զիջված լինելու հանգամանքից: Ընդ որում, ֆակտորինգի պայմանագրի հիման վրա պահանջի զիջման մասին գրավոր ծանուցումը (հավելված N 4) ստանալու դեպքում Պատվիրատուն պայմանագրով սահմանված վճարումը կատարում է ֆինանսական գործակալին, եթե ծանուցումը ստացվել է Պատվիրատուի կողմից վճարման հանձնարարագիրը և արձանագրության պատճենը լիազորված մարմնի գանձապետական համակարգ մուտքագրելու օրվան նախորդող օրը[10]

7.13 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7.14 Սույն պայմանագիրը կազմված է __**6**__ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 3.1 և N 4 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.15 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

**8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

| **Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ** | **Կ Ա Տ Ա Ր Ո Ղ** |
|---|---|
| Զորավար Անդրանիկի 8/1<br>Ալավերդու համայնքապետարան<br>ՀՀ ֆինանսների Նախարարության<br>Գործառնական Վարչություն<br>ՀՎՀՀ 06967886<br>h/h 900262121057<br>Համայնքի ղեկավար՝ Դ. Ղումաշյան | «ԱՐԽԻՏԵԿՏ» ՍՊԸ<br>ք. Գյումրի, Շիրակացի փ. 83<sub>2</sub>, բն. 40<br>ՀՎՀՀ 05547385<br>«Կոնվերսբանկ» ՓԲԸ<br>Հ/Հ 1930030206282300<br>Տնօրեն՝ Ն.Սիրեկանյան |
| ------------------------------<br>(ստորագրություն)<br>Կ.Տ. | ------------------------------<br>(ստորագրություն)<br>Կ.Տ. |

*Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:*

---

## ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | մատուցման | |
| | | | | | | հասցեն | ժամկետը** |
| 1 | 50531140 | | դրամ | 1260000 | 1 | Ալավերդի համայնք | Պատվիրատուի կողմից նախագծանախահաշվային փաստաթղթերը Կատարողին ամբողջական լրակազմով տրամադրելուն հաջորդող օրվանից՝ 20 օրացուցային օր: |
| 2 | 50531140 | | դրամ | 405000 | 1 | | |

ՉԱՓԱԲԱԺԻՆ 1

## ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

## նախագծանախահաշվային փաստաթղթերի քաղաքաշինական պարզ փորձաքննության ծառայությունների

| | |
|---|---|
| 1 | **Քաղաքաշինական պարզ փորձաքննության ծառայության մատուցման բնութագիրը** |
| | ՀՀ կառավարության 19.03.2015թ թիվ 596-Ն որոշման երկրորդ կետով հաստատված քաղաքաշինական փաստաթղթերի փորձաքննության իրականացման կարգին համապատասխան |
| 2 | **Կատարման ենթակա աշխատանքների անվանումը** |
| | Պատվիրատուի կողմից ներկայացվող հետևյալ նախագծանախահաշվային փաստաթղթերի ամբողջ փաթեթի քաղաքաշինական պարզ փորձաքննության իրականացում.<br>1. Ալավերդի համայնքում խաղահրապարակների, մարզահրապարակների և տաղավարների կառուցման և բարեկարգման աշխատանքներ (թվով 4 նախագիծ՝ 1-Ալավերդի քաղաքում Դեբեդ թաղամասում մարզահրապարակի/խաղահրապարակի կառուցման աշխատանքներ,2-Ալավերդի քաղաքում Սանահին Սարահարթ թաղամասում մարզահրապարակի/խաղահրապարակի կառուցման աշխատանքներ, 3-Ախթալա բնակավայրի Կենտրոնական մարզադաշտի խոտածածկի վերականգնման աշխատանքներ, 4-Ճոճկան բնակավայրում մարզահրապարակի/խաղահրապարակի կառուցման աշխատանքներ)<br>2. Ալավերդի համայնքի Աքորի բնակավայրի մշակույթի տան տանիքի վերանորոգման աշխատանքներ<br>3.Ալավերդի համայնքի Մղարթ բնակավայրի մշակույթի տան տանիքի վերանորոգման աշխատանքներ<br>4.Ալավերդի համայնքի Ծաղկաշատ բնակավայրի արտաքին լուսավորության համակարգի կառուցման աշխատանքներ /50 հատ/<br>5.Ալավերդի համայնքի Ճոճկան բնակավայրում 3-կմ ոռոգման համակարգի կառուցման<br>6.Ալավերդի համայնքի Ալավերդի և Ախթալա քաղաքների, Աքորի, Ծաղկաշատ, Թեղուտ, Շնող գյուղերի փողոցների ասֆալտապատման աշխատանքներ |
| 3 | **Նախագծի փորձաքննության ենթակա փաստաթղթեր** |
| | • **Նախագծայինմասեր**<br>• **Ճանապարհային մաս**<br>• **Ճարտարապետական և կոնստրուկտիվ մասեր**<br>• **Նախահաշիվներ**<br>• **Շինարարության կազմակերպման մասեր** |
| 4 | **Տեխնիկական առաջադրանք ՝ համաձայն** ՀՀ կառավարության 19.03.2015թ թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգի |
| 5 | **Իրավական ակտերի պահանջների ապահովում, ակտերից շեղումների և խախտումների բացահայտում**<br>1)Փորձաքննության միջոցով նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջների խախտումներով մշակված քաղաքաշինական փաստաթղթերում նախագծային լուծումներին առնչվող շեղումների վերաբերյալ նախագծային կազմակերպության հետ համատեղ փոփոխությունների, |

<table>
<tr><td></td><td colspan="2">լրացումների, այլընտրանքային լուծումների, լուծման առավել արդյունավետ տարբերակների քննարկում՝ փորձաքննվող փաստաթղթերի պարտադիր լրամշակման պահանջով<br>2)Նախագծողի կողմից օրենքի կամ այլ իրավական ակտերի պահանջների ու պայմանների կոպիտ և (կամ) պարբերաբար խախտումների կատարման դեպքում համապատասխան առաջարկությամբ միջնորդագրի ուղղում Պատվիրատուին<br>3)Օբյեկտի շինարարական աշխատանքների ընթացքում, հիմնավոր անհրաժեշտությունից ելնելով, Պատվիրատուի կամ Հեղինակի ներկայացմամբ տվյալ նախագծանախահաշվային փաստաթղթերի փոփոխությունների փաթեթը ենթակա է պարզ փորձաքննության Ընկերության կողմից անհատույց, իսկ այդ փոփոխությունների ընդհանուր արժեքը չի կարող ավել լինել տվյալ օբյեկտի շինարարության նախահաշվային արժեքի 15%-ից: Սահմանված սահմանաչափը գերազանցող փոփոխությունների փաթեթի լրացուցիչ փորձաքննությունը կարող է իրականացվել լրացուցիչ ֆինանսավորման դեպքում, եթե կողմերը այլ գրավոր համաձայնության չեն գալիս:</td></tr>
<tr><td>6</td><td colspan="2">Պատասխանատվություն<br>1)ՀՀ կառ.04.05.2017թ թիվ 526-Ն որ. Հավելված 1-ի 33-րդ կետի 14-րդ ենթակետի համաձայն՝ շինարարական ծրագրերի կատարման համար անհրաժեշտ նախագծային փաստաթղթերը քաղաքաշինական փորձաքննության ենթարկելու նպատակով անձի հետ կնքվող պայմանագրում նախատեսվում է, որ շինարարական ծրագրերի կատարման ընթացքում նախագծային շեղումներ առաջանալու դեպքում անձը պատվիրատուին վճարում է տուգանք՝ յուրաքանչյուր արձանագրված շեղման հետևանքով առաջացած կորստի չափով: Ընդ որում՝<br>ա. շեղում է համարվում աշխատանքների կատարման ընթացքում սկզբնական նախագծի տասը տոկոսը գերազանցող լրացուցիչ ծավալի աշխատանքների ի հայտ գալը, իսկ տուգանքի չափը հավասար է լրացուցիչ ծավալի աշխատանքների արժեքի քանիհինգ տոկոսին,<br>բ. կորուստ են համարվում նախագծային այնպիսի շեղումները, որոնք հանգեցնում են փաստացի կատարված աշխատանքների փոփոխմանը (քանդման, վերակառուցման և այլն) և լրացուցիչ աշխատանքների կատարմանը, իսկ տուգանքի չափը հավասար է կորստի հանգեցրած՝ փաստացի կատարված աշխատանքների արժեքի հիսուն տոկոսին.</td></tr>
<tr><td>7</td><td colspan="2">Նախագծային փաստաթղթերի պարզ քաղաքաշինական փորձաքննության ծառայությունները պետք է իրականացվեն հետևյալ լիցենզիայի ներդիրների շրջանակներում:</td></tr>
<tr><td></td><td colspan="2">ԼԻՑԵՆԶԻԱ<br>(<Լիցենզավորման մասին> ՀՀ օրենք)</td></tr>
<tr><td></td><td colspan="2">1-ԻՆ կամ 2-րդ ԴԱՍԻ ԼԻՑԵՆԶԻԱ<br>Քաղաքաշինական փաստաթղթերի փորձաքննություն (բացառությամբ շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքների)</td></tr>
<tr><td></td><td colspan="2">ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2023 թվականի դեկտեմբերի 6-ի N 15-Ն հրաման<br>(լիցենզիայի անբաժանելի մաս հանդիսացող համապատասխան ոլորտի աշխատանքներն իրականացնող պատասխանատու անձանց)</td></tr>
<tr><td></td><td colspan="2">1.Բնակելի, հասարակական և արտադրական կառույցներ<br>2.էլեկտրամատակարարում (էլեկտրամատակարարման, էլեկտրալուսավորման ներքին և արտաքին ցանցեր, էլեկտրամատակարարման համակարգեր, ֆոտովոլտային և հողմաէներգետիկ կայաններ)<br>3. ջրամատակարարում և ջրահեռացում (ջրամատակարարման և ջրահեռացման ներքին և արտաքին ցանցեր, հիդրոմելորացիա)<br>4.Տրանսպորտային ուղիներ (ավտոմոբիլային ճանապարհներ, երկաթուղային գծեր և օդանավակայաններ, արհեստական կառուցվածքներ՝ կամուրջներ, թունելներ, ուղեանցներ, էստակադաներ, հենապատեր և այլն)</td></tr>
<tr><td>8</td><td colspan="2">ԱՅԼ ՊԱՀԱՆՋ</td></tr>
<tr><td></td><td colspan="2">Կատարողի կողմից պայմանագրային արդյունքները կատարելուց հետո, ներկայացվելիք եզրակացության հետ միաժամանակ պետք է ներկայացնել նաև Կատարողի լիցենզիան և անհրաժեշտ բոլոր ներդիրները: Իսկ դրական եզրակացությունը ներբեռնվի քաղաքաշինության ոլորտի թվային ծառայությունների https://urban-permits.e-gov.am/hy/ հարթակում:</td></tr>
<tr><td>9</td><td colspan="2">Ծառայության մատուցման ժամկետը</td></tr>
<tr><td></td><td>Սկիզբը</td><td>Ավարտը</td></tr>
<tr><td></td><td>Ծառայության սկիզբը համարվում է պայմանագրի կնքման օրից</td><td>Պատվիրատուի կողմից նախագծանախահաշվային փաստաթղթերը Կատարողին ամբողջական լրակազմով տրամադրելուն հաջորդող օրվանից՝ 20 օրացուցային օր:<br>Ընդ որում, այն պարագայում, երբ<br>- Պարզ փորձաքննության արդյունքով տրվում է եզրակացություն «Նախագիծը վերադարձվում է լրամշակման» ձևակերպմամբ, նախագծող կազմակերպության կողմից լրամշակումն իրականացնելուց հետո, Կատարողը /փորձաքննությունն իրականացողը/, սույն պայմանագրի շրջանակներում անհատույց պարտավորվում է իրականացնել կրկնակի փորձաքննություն՝ 3 օրյա ժամկետում:</td></tr>
</table>

ՉԱՓԱԲԱԺԻՆ 2

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

## նախագծանախահաշվային փաստաթղթերի քաղաքաշինական պարզ փորձաքննության ծառայությունների

| | |
|---|---|
| 1 | **Քաղաքաշինական պարզ փորձաքննության ծառայության մատուցման բնութագիրը** |
| | ՀՀ կառավարության 19.03.2015թ թիվ 596-Ն որոշման երկրորդ կետով հաստատված քաղաքաշինական փաստաթղթերի փորձաքննության իրականացման կարգին համապատասխան |
| 2 | **Կատարման ենթակա աշխատանքների անվանումը** |
| | Պատվիրատուի կողմից ներկայացվող հետևյալ նախագծանախահաշվային փաստաթղթերի ամբողջ փաթեթի քաղաքաշինական պարզ փորձաքննության իրականացում.<br>1..Ալավերդի համայնքի Ալավերդի քաղաքի մարզադպրոցի վերանորոգման և մարզադպրոցի շենքին կից փակ լողավազանի կառուցման աշխատանքներ<br>2. Ալավերդի համայնքի Սանահին բնակավայրի թիվ 5 մանկապարտեզի շենքը որպես վարչական շենքի վերակառուցման, վերանորոգման աշխատանքներ<br>3. Ալավերդի համայնքի Շնող բնակավայրի մշակույթի տան մասնակի վերանորոգման աշխատանքներ<br>4. Ալավերդի համայնքի Օձուն բնակավայրի մշակույթի տան դահլիճի վերանորոգման աշխատանքներ |
| 3 | **Նախագծի փորձաքննության ենթակա փաստաթղթեր** |
| | • **Նախագծային մասեր**<br>• **Ճարտարապետական մաս**<br>• **Կոնստրուկտորական և ինժեներական մասեր**<br>• **Նախահաշիվներ**<br>• **Շինարարության կազմակերպման մասեր** |
| 4 | **Տեխնիկական առաջադրանք՝ համաձայն** ՀՀ կառավարության 19.03.2015թ թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգի |
| 5 | **Իրավական ակտերի պահանջների ապահովում, ակտերից շեղումների և խախտումների բացահայտում**<br>1)Փորձաքննության միջոցով նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջների խախտումներով մշակված քաղաքաշինական փաստաթղթերում նախագծային լուծումներին առնչվող շեղումների վերաբերյալ նախագծային կազմակերպության հետ համատեղ փոփոխությունների, լրացումների, այլընտրանքային լուծումների, լուծման առավել արդյունավետ տարբերակների քննարկում՝ փորձաքննվող փաստաթղթերի պարտադիր լրամշակման պահանջով<br>2)Նախագծողի կողմից օրենքի կամ այլ իրավական ակտերի պահանջների ու պայմանների կոպիտ և (կամ) պարբերաբար խախտումների կատարման դեպքում համապատասխան առաջարկությամբ միջնորդագրի ուղղում Պատվիրատուին<br>3)Օբյեկտի շինարարական աշխատանքների ընթացքում, հիմնավոր անհրաժեշտությունից ելնելով, Պատվիրատուի կամ Հեղինակի ներկայացմամբ տվյալ նախագծանախահաշվային փաստաթղթերի փոփոխությունների փաթեթը ենթակա է պարզ փորձաքննության Ընկերության կողմից անհատույց, իսկ այդ փոփոխությունների ընդհանուր արժեքը չի կարող ավել լինել տվյալ օբյեկտի շինարարության նախահաշվային արժեքի 15%-ից: Սահմանված սահմանաչափը գերազանցող փոփոխությունների փաթեթի լրացուցիչ փորձաքննությունը կարող է իրականացվել լրացուցիչ ֆինանսավորման դեպքում, եթե կողմերը այլ գրավոր համաձայնության չեն գալիս: |
| 6 | **Պատասխանատվություն**<br>1)ՀՀ կառ.04.05.2017թ թիվ 526-Ն որ. Հավելված 1-ի 33-րդ կետի 14-րդ ենթակետի համաձայն՝ շինարարական ծրագրերի կատարման համար անհրաժեշտ նախագծային փաստաթղթերը քաղաքաշինական փորձաքննության ենթարկելու նպատակով անձի հետ կնքվող պայմանագրում նախատեսվում է, որ շինարարական ծրագրերի կատարման ընթացքում նախագծային շեղումներ առաջանալու դեպքում անձը պատվիրատուին վճարում է տուգանք՝ յուրաքանչյուր արձանագրված շեղման հետևանքով առաջացած կորստի չափով: Ընդ որում՝<br>ա. շեղում է համարվում աշխատանքների կատարման ընթացքում սկզբնական նախագծի տասը տոկոսը գերազանցող լրացուցիչ ծավալի աշխատանքների ի հայտ գալը, իսկ տուգանքի չափը հավասար է լրացուցիչ ծավալի աշխատանքների արժեքի քսանհինգ տոկոսին,<br>բ. կորուստ են համարվում նախագծային այնպիսի շեղումները, որոնք հանգեցնում են փաստացի կատարված աշխատանքների փոփոխմանը (քանդման, վերակառուցման և այլն) և լրացուցիչ աշխատանքների կատարմանը, իսկ տուգանքի չափը հավասար է կորստի հանգեցրած՝ փաստացի կատարված աշխատանքների արժեքի հիսուն տոկոսին. |
| 7 | **Նախագծային փաստաթղթերի պարզ քաղաքաշինական փորձաքննության ծառայությունները պետք է իրականացվեն հետևյալ լիցենզիայի ներդիրների շրջանակներում:** |

| | | |
|---|---|---|
| | ԼԻՑԵՆԶԻԱ<br>(<Լիցենզավորման մասին> ՀՀ օրենք) | |
| | **1-ԻՆ ԴԱՍԻ ԼԻՑԵՆԶԻԱ**<br>**Քաղաքաշինական փաստաթղթերի փորձաքննություն (բացառությամբ շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքների)** | |
| | **ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2023 թվականի դեկտեմբերի 6-ի N 15-Ն հրաման**<br>*(լիցենզիայի անբաժանելի մաս հանդիսացող համապատասխան ոլորտի աշխատանքներն իրականացնող պատասխանատու անձանց)* | |
| | **1.բնակելի, հասարակական և արտադրական կառույցներ**<br>**2.էլեկտրամատակարարում (էլեկտրամատակարարման, էլեկտրալուսավորման ներքին եվ արտաքին ցանցեր, էլեկտրամատակարարման համակարգեր, ֆոտովոլտային եվ հողմաէներգետիկ կայաններ)**<br><br>**3.Ջրամատակարարում և ջրահեռացում (ջրամատակարարման և ջրահեռացման ներքին և արտաքին ցանցեր, հիդրոմելորացիա)**<br><br>**4.Ջերմագազամատակարարում և օդափոխություն (օդափոխության, ջեռուցման և օդի լավորակման համակարգեր, ջերմամատակարարման և գազամատակարարման համակարգեր)** | |
| 8 | **ԱՅԼ ՊԱՀԱՆՋ** | |
| | **Կատարողի կողմից պայմանագրային արդյունքները կատարելուց հետո, ներկայացվելիք եզրակացության հետ միաժամանակ պետք է ներկայացնել նաև Կատարողի լիցենզիան և անհրաժեշտ բոլոր ներդիրները: Իսկ դրական եզրակացությունը ներբեռնվի քաղաքաշինության ոլորտի թվային ծառայությունների https://urban-permits.e-gov.am/hy/ հարթակում:** | |
| 9 | **Ծառայության մատուցման ժամկետը** | |
| | **Սկիզբը** | **Ավարտը** |
| | **Ծառայության սկիզբը համարվում է** պայմանագրի կնքման օրից | **Պատվիրատուի կողմից նախագծանախահաշվային փաստաթղթերը Կատարողին ամբողջական լրակազմով տրամադրելուն հաջորդող օրվանից՝** 20 **օրացուցային օր:**<br>Ընդ որում, այն պարագայում, երբ<br>- Պարզ փորձաքննության արդյունքով տրվում է եզրակացություն «Նախագիծը վերադարձվում է լրամշակման» ձևակերպմամբ, նախագծող կազմակերպության կողմից լրամշակումն իրականացնելուց հետո, Կատարողը /փորձաքննությունն իրականացողը/, սույն պայմանագրի շրջանակներում անհատույց պարտավորվում է իրականացնել կրկնակի փորձաքննություն՝ 3 օրյա ժամկետում: |

*Ծառայությունների մատուցման ժամկետը, իսկ փուլային ձևով պայմանագրի կատարման դեպքում՝ առաջին փուլի ժամկետը, պետք է սահմանվի առնվազն 20 օրացուցային օր, որի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրը, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է ծառայությունները մատուցել ավելի կարճ ժամկետում*

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

Զորավար Անդրանիկի 8/1
Ալավերդու համայնքապետարան
ՀՀ ֆինանսների Նախարարության
Գործառնական Վարչություն
ՀՎՀՀ 06967886
հ/հ 900262121057
Համայնքի ղեկավար՝ Դ. Ղումաշյան

---------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

**ԿԱՏԱՐՈՂ**

«ԱՐԽԻՏԵԿՏ» ՍՊԸ
ք. Գյումրի, Շիրակացի փ. 83₂, բն. 40
ՀՎՀՀ 05547385
«Կոնվերսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1930030206282300
Տնօրեն՝ Ն.Սիրեկանյան

---------------------------------
(ստորագրություն)
Կ.Տ.

*Հավելված N 2*
*«      »           20  թ. կնքված*
*ծածկագրով պայմանագրի*

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2026թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1-2 | 50531140 | Ալավերդու համայնքի կարիքների համար նախագծանախահաշվային փաստաթղթերի քաղաքաշինական պարզ փորձաքննության ծառայության ձեռք բերում | | 1665000 | 1665000 | 1665000 | 1665000 | 1665000 | 1665000 | 1665000 | 1665000 | 1665000 | 1665000 | 1665000 | 1665000 |

*** հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ*

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

Զորավար Անդրանիկի 8/1
Ալավերդու համայնքապետարան
ՀՀ ֆինանսների Նախարարության
Գործառնական Վարչություն
ՀՎՀՀ 06967886
հ/հ 900262121057
Համայնքի ղեկավար՝ Դ.Ղումաշյան

-------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

**ԿԱՏԱՐՈՂ**

«ԱՐԽԻՏԵԿՏ» ՍՊԸ
ք. Գյումրի, Շիրակացի փ. 83շ, բն. 40
ՀՎՀՀ 05547385
«Կոնվերսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1930030206282300
Տնօրեն՝                Ն.Սիրեկանյան

-------------------------------
(ստորագրություն)
Կ.Տ.

*Հավելված 3*
*«      »           20  թ. կնքված*
*ծածկագրով պայմանագրի*

Պայմանագրի կողմ

______________________

______________________

գտնվելու վայրը ____________
հհ ____________________
հվհհ ___________________

Պատվիրատու

______________________

______________________

գտնվելու վայրը ____________
հհ____________________
հվհհ___________________

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
## ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

«    » «          » 20    թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

______________________________________________________________

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «________________» 20 թ.
Պայմանագրի համարը՝ __________
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ «    » «          » 20    թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

| N | Մատուցված ծառայությունների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | | |
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց

______________________
ստորագրություն

______________________
ազգանուն, անուն

Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց

______________________
ստորագրություն

______________________
ազգանուն, անուն

Կ.Տ.

*Հավելված 3.1*
*«      »           20  թ. կնքված*
*ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _______________-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և ___________-ի
Պատվիրատուի անունը                    Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20    թ. ______________________ -ին կնքված N ______________________
պայմանագրի կնքման ամսաթիվը                    պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20  թ. __________-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

| Ծառայության | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

КՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

______________________
ազգանուն, անուն

______________________
ստորագրություն

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

______________________
ազգանուն, անուն

______________________
ստորագրություն

*Հավելված N 4*
*«      »          20  թ. կնքված*
*ծածկագրով պայմանագրի*

# ԾԱՆՈՒՑՈՒՄ

______________________________ հայտնում է, որ .
ֆինանսական գործակալի անվանումը

1. ____________________-ի և ____________________-ի միջև «--»      20  թ. կնքված
պատվիրատուի անվանումը                    կատարողի անվանումը

«---------/---------» ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակում իր և

____________________-ի     միջև  «--»   20  թ-ին կնքվել է «--------------------» ծածկագրով ֆակտորինգի
կատարողի անվանումը

պայմանագիրը,

2. համաձայն է Պայմանագրի 7.12 կետով սահմանված պահանջներին:

______________________________
ֆինանսական գործակալի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը)

______________
ստորագրությունը

Կ. Տ. (առկայության դեպքում)

«--»        20  թ.